ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Վանգաս» ՍՊԸ-ի 30.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. «Վանգաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վանգաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վանգաս» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով հայտարարված հանդերձանքի գնման ընթացակարգին:

Ընթացակարգի հրավերի համաձայն «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով նմանատիպ են համարվել «անկողնային

պարագաների և սպիտակեղենի» մատակարարման պայմանագրերը (հրավերի 1-ին մասի 2-րդ բաժին 2.3 կետ):»:

Ընկերությունը նշել է, որ՝

• ընթացակարգի քարտուղարի կողմից ծանուցվել է այն մասին, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

• հրավերով սահմանված կարգով իրենց կողմից ներկայացվել են որակավորման «մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող փաստաթղթեր, մասնավորապես՝ ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրերի պատճենները, դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերի՝ հաշիվ-ապրանքագրերի պատճենները: Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի և «Սարգիս Նիկողոսյան» ԱՁ-ի միջև 16.02.2015թ. կնքված N 1-2015, «Վանգաս» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 27.02.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/21-4 պայմանագրերը և նշված պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հարկային հաշիվների, հանձնման-ընդունման արձանագրությունների, պայմանագրերի կատարումը ընդունած կողմերի գրավոր հավաստումները:

• «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ն հանդես է գալիս «Վանգաս» ՍՊԸ-ի հետ տվյալ ընթացակարգում որպես կոնսորցիումի անդամ և համաձայն վերոնշյալ պայմանագրերի Ընկերության և կոնսորցիումի անդամի՝ «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են ավելի քան 43 000 000 դրամի նմանատիպ համարվող ապրանքներ, սակայն գնահատող հանձնաժողովը «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի հետ 16.02.2015թ. կնքված 1-2015 պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքները չի համարել որպես «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված նմանատիպ համարվող ապրանքներ և հանձնաժողովի կողմից առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը:

• ի պատասխան շտկման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի գրության՝ իրենց կողմից ուղարկվել է հավաստում առ այն, որ նշված պայմանագրի շրջանակներում «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի կողմից մատակարարված «կտոր բամբակյա 2.15» /Հավելված 1-ի 2-րդ չափաբաժին/, «կտոր բամբակյա դոշակի երես» /չափաբաժին 4/,

«կտոր բամբակյա 2.4 սատին» /6-րդ չափաբաժին/ և «կտոր բամբակյա սպիտակեցված» /չափաբաժին 7/ ապրանքները հանդիսանում են սպիտակեղենի կտորներ և օգտագործվում են որպես անկողնային պարագաներ՝ միաժամանակ խնդրել է, որ դրանք համարեն որպես նմանատիպ ապրանքներ:

• գնահատող հանձնաժողովի կողմից այդ ապրանքները չեն գնահատվել որպես նմանատիպ և 2017 թվականի ապրիլի 26-ի թիվ 1.1 որոշմամբ «Վանգաս» ՍՊԸ-ի՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան /մատակարարված նմանատիպ ապրանքների գումարը չի բավարարել պահանջվող չափին /մերժվել է հայտը 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ հաղթող ճանաչելով միայն 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը գտնում է, որ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու հարցում գնահատող հանձնաժողովը կայացրել է սխալ որոշում, որի արդյունքում խախտվել են Ընկերության շահերը: Ընկերությունը ակնհայտ է համարել այն, որ հանձնաժողովի անդամները չունեն մասնակիցների հայտերը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություններ նմանատիպ համարվող ապրանքների որոշման հարցում, կամ որոշումներ կայացնելիս առաջնորդվել են սխալ սկզբունքներով, որի արդյունքում նշված չափաբաժինների մասով գնումներն անհիմն թանկացել են ավելի քան 3 800 000 դրամով:

Ընկերությունը որպես իրավական հիմք հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի շրջանակներում հարցումը կատարվել և հրավերն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. N 220-Ն հրամանով հաստատված ցանկի 1.10՝ «հանդերձանք» կետում գրանցված մասնակիցներին:

ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.10.4-րդ ենթակետի համաձայն՝ անկողնային պարագաներ և սպիտակեղեն ապրանքատեսակները ներառված են «հանդերձանք և անկողնային պարագաներ» խմբում:

Ընկերությունը հավաստել է, որ կոնսորցիումով հանդես եկող կազմակերպության՝ «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի կողմից 1-2015 պայմանագրի շրջանակներում

մատակարարված ապրանքները հանդիսանում են անկողնային պարագաներ, այսինքն, դրանք ներառված են և դասվում են հիշյալ հրամանի 1.10 կետի ենթակետով նախատեսված «հանդերձանք և անկողնային պարագաներ» խմբին (հանդիսանում են կտորի տեսակներ) և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված՝ նմանատիպ համարվող ապրանքներին ներկայացված պահանջին:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 69-րդ կետի համաձայն «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի կողմից 1-2015 պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքները դասվում են համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին, հետևաբար այդ պայմանագիրը նշված կետի համաձայն նույնպես պետք է դիտարկվի որպես համանման:

Ընկերությունը նշել է, որ տարակուսելու դեպքում՝ հիմք ընդունելով Կարգի 69-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը պետք է իրենց կողմից ներկայացրած պայմանագիրը գնահատեր հրավերի պահանջներին համապատասխանող (հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի):

Ընկերությունը հաշվի առնելով վերոշարադրվածը գտել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀօրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 31-րդ հոդվածի և Կարգի 69-րդ կետի պահանջների խախտում:»:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ցանկացած որոշման կայացում, այդ թվում նաև 2017 թվականի մայիսի 23-ի պայմանագիր կնքելու մասին որոշումը և արդեն իսկ կայացած որոշումների կատարման իրականացումը,

2. Չեղյալ համարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2017 թվականի ապրիլի 26-ին ընդունած՝ «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ թիվ 1.1 որոշումը,

3. Չեղյալ համարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը 5-րդ չափաբաժնի մասով «Կոտայքկոշ» ՍՊԸ-ին, իսկ 9-րդ չափաբաժնի մասով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումները:

Խորհրդի 02.06.2017թ. նիստին մասնակցում էր «Վանգաս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Սահակյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.06.2017թ. թիվ ԴՎԱ/1762 գրությամբ Խորհրդին ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40 ծածկագրով հայտարարված մրցույթով գնվելիք ապրանքները բացառապես համարվում են անկողնային պարագաներ և սպիտակեղեն, ուստի մրցույթը հայտարարվել է համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 220-Ն հրամանի շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի 1.10.4 անվանատողի (անկողնային պարագաներ և սպիտակեղեն) և որակավորման չափանիշներում որպես նմանատիպ պայմանագիր պահանջվել անկողնային պարագաների և սպիտակեղենի՝ նախկինում կատարված պայմանագրերի առկայություն:

«Վանգաս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ ընկերության կողմից ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փատաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Վանգաս» ՍՊԸ-ն ներկայացել էր ոչ թե անկողնային պարագաների և սպիտակեղենի նմանատիպ պայմանագիր, այլ կտորեղենի առքուվաճառքի պայմանագիր, որը հանձնաժողովի կողմից դիտարկվել է ոչ նմանատիպ և դրա արդյունքում Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս էր 5-րդ և 9-րդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկների 50 տոկոսից:

Հանձնաժողովի կողմից, համաձայն գործող կարգի, ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու անհարժեշտության վերաբերյալ, սակայն ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել, այլ ներկայացվել է նույն պայմանագիրը:»:

Պատվիրատուն նշել է, որ հանձնաժողովը առաջնորդվել է ՀՀ կառավարության 168-Ն որոշման 65-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, որի արդյունքում «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Խորհրդի 02.06.2017թ. նիստին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Գագիկ Նշանի Ուստյանը և Աշոտ Վիլենի Գրիգորյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԷՍ-2017/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) կողմից 2017 թվականի մարտի 22-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերը:
2. N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը:
3. ՀՀ պաշտպանության նախարարության 06.06.2017թ. թիվ ԴՎԱ/1702 գրությունը:
4. Ընկերության և Պատվիրատուի կողմից Խորհրդին ներկայացրած «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի և «Սարգիս Նիկողոսյան» ԱՁ-ի միջև 16.02.2015թ. կնքված N 1-2015 պայմանագրի պատճենը:
5. Խորհրդի նիստերի ընթացքում Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կողմից արտահայտած կարծիքները և դիրքորոշումները:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուդը ուսումնասիրել է «Վանգաս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.05.2017թ. ներկայացրած բողոքը, N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.06.2017թ. թիվ ԴՎԱ/1702

գրությունը, N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.04.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի և «Սարգիս Նիկողոսյան» ԱՁ-ի միջև 16.02.2015թ. կնքված N 1-2015 պայմանագիրը, Պատվիրատուի ներկայացուցիչների ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը հանդերձանքի ձեռքբերման նպատակով 22.03.2017թ. հայտարարել է N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

«Վանգաս» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 26.04.2017թ. թիվ 4 արձանագրությամբ մերժել է Ընկերության կողմից ներկայացրած հայտը Ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ «նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է նշված չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկների 50 տոկոսից» հիմնավորմամբ:

Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով գնման ենթակա ապրանք է հանդիսանում «Վերմակներ/Ծածկոց՝ կիսաբրդյա/» ապրանքը, իսկ 9-րդ չափաբաժնով՝ «Սրբիչ՝ վաֆլե, բամբակյա/Սրբիչ, վաֆլե, բաղնիքի/» ապրանքը:

Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկով Ընկերությունը ընթացակարգի 5-րդ չափաբաժնի՝ «Վերմակներ /Ծածկոց՝ կիսաբրդյա/» ապրանքի համար առաջարկել է 51 129 000 ՀՀ դրամ, իսկ 9-րդ չափաբաժնի՝ «Սրբիչ՝ վաֆլե, բամբակյա /Սրբիչ՝ վաֆլե, բամբակյա/» ապրանքի համար՝ 42 662 880 ՀՀ դրամ:

«Վանգաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը բավարարելու նպատակով հայտով ներկայացրել է Ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 27.02.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/21-4 պայմանագրի պատճենը՝ 16 440 000 (տասնվեց միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով և «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի և «Սարգիս Նիկողոսյան» ԱՁ-ի միջև 16.02.2015թ. կնքված N 1-2015 առքուվաճառքի պայմանագրի պատճենը՝ 26.616.780 (քսանվեց միլիոն վեց հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 27.02.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/21-4 պայմանագրով սահմանվել է «Ներքնակներ /Ներքնակ՝ սպունգից/» (2000 հատ, 8220 ՀՀ դրամ միավորի գնով) մատակարարման ենթակա ապրանքը, իսկ «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի և «Սարգիս Նիկողոսյան» ԱՁ-ի միջև 16.02.2015թ. կնքված N 1-2015 առքուվաճառքի պայմանագրի N 1 հավելվածով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքների հետևյալ անվանացանկը՝

1. Կտոր բամբակյա 2.15-Ա (400 գ/մ, 250 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 100 000 ՀՀ դրամ),

2. Կտոր բամբակյա 2.15 (71500 գ/մ, 260 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 18 590 000 ՀՀ դրամ),

3. Կտոր բամբակյա չմշակված (2000 գ/մ, 240 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 480 000 ՀՀ դրամ),

4. Կտոր բամբակյա չմշակված (700 գ/մ, 230 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 161 000 ՀՀ դրամ),

5. Կտոր բամբակյա դոշակի երես (6000 գ/մ, 300 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 1 800 000 ՀՀ դրամ),

6. Կտոր բամբակյա դոշակի երես (550 գ/մ, 280 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 154 000 ՀՀ դրամ),

7. Կտոր բամբակյա նապերնիկ (800 գ/մ, 300 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 240 000 ՀՀ դրամ),

8. Կտոր բամբակյա նապերնիկ (200 գ/մ, 280 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 56 000 ՀՀ դրամ),

9. Կտոր բամբակյա 2.40 սատին (6279 գ/մ, 420 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 2 637 180 ՀՀ դրամ),

10. Կտոր բամբակյա սպիտակեցված (3900 գ/մ, 260 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 1 014 000 ՀՀ դրամ),

11. Կտոր բամբակյա սպիտակեցված (300 գ/մ, 250 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 75 000 ՀՀ դրամ),

12. Կտոր բամբակյա բամբազ (4020 գ/մ, 330 ՀՀ դրամ միավորի գնով, որի ընդհանուր գումարը կազմում է 1 326 600 ՀՀ դրամ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված

որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 65-րդ կետի 1)-ին և 3)-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները

տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Խորհուրդը գտնում է, որ «Առևտրի տուն Ուզբեկտկանի» ՍՊԸ-ի և «Սարգիս Նիկողոսյան» ԱՁ-ի միջև 16.02.2015թ. կնքված N 1-2015 առքուվաճառքի պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր, քանի որ նշված պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ապրանքները հանդիսանում Հրավերով պահանջվող անկողնային պարագաների և սպիտակեղենի հումք:

Խորհուրդը արձանագրում է, որ Ընկերության կողմից 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 16 440 000 (տասնվեց միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հրավերի I մասի 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար (եթե ընթացակարգն իրականացվում է մեկ չափաբաժնով, ապա մասնակիցը կարող է ընթացակարգի հայտ ներկայացնել միայն ամբողջ չափաբաժնի համար):

Հրավերի I մասի 8-րդ կետի 8.1 ենթակետի 8.1.4 պարբերության համաձայն՝ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների /եթե ընթացակարգն ունի մեկից ավելի չափաբաժիններ/:

Խորհուրդն գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը Ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մերժելով, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) չեն

համապատասխանում Կարգի 65-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 30.05.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ